



ՏԱՆ ՆՈԹԵՐ

կառուցում

Ավելի լավ համայնքի

ՓԱՍԱՂԵՆԱ ԶԱՂԱՔԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Սեքշն 8 Ծրագրի Մասնակիցի/Տիրոջ Տեղեկագիր
Մայիս 2023

Հայերեն թարգմանության
համար այցելեք

www.cityofpasadena.net/housing/

**Փասաղենա քաղաքը Սեքշն 8
ծրագրի վարձակալության
օգնության դիմումները
կրնդունի առցանց 2023-ի
Հունիսի 1-ից Հունիսի 15-ը:**

Սեքշն 8 ծրագիրը տրամադրում է
վարձակալության օգնություն շատ ցածր
եկամուտ ունեցող տնային
տնտեսություններին, ներառյալ
ընտանիքներին, տարեցներին,
միայնակներին և հաշմանդամներին:

Հետաքրքրված տնտեսությունները
պետք է առցանց դիմեն 2023-ի Հունիսի
1-ից մինչև Հունիսի 15-ը: Կարող եք
դիմել համակարգչի, սմարթֆոնի կամ
ինտերնետին միացված թաբլետի
միջոցով: Եթե օգնության կամ
համակարգչի հասանելիության կարիք
ունեք, դա հասանելի է Փասաղենայի
հանրային գրադարաններում՝ բաց
ժամերին, Ֆիլնտրիջ Կենտրոնում՝
հատուկ ժամերին և Փասաղենայի
Սիկլոր Սենթրում ժամադրությամբ:

Լրացուցիչ տեղեկության համար,
ներառյալ համակարգչի վայրերն ու
ժամերը, սկանավորեք այս QR կոդը կամ
այցելեք՝

www.cityofpasadena.net/housing

Տանտիրոջ Լուրեր

Գույքի սեփականատերեր, Հունիսի վճարումը
կուղարկվի/կտեղադրվի Հունիսի 5-ին:
Փասաղենայի քաղաքապետարանի այուջետային
տարվա ավարտի պատճառով, Հունիս ամսվա
սեփականատերերին բնակարանային
աջակցության վճարումները էլեկտրոնային կամ
փոստով կուղարկվեն Չորեքշաբթի՝ Հունիսի 5, 2023-
ին: Հունիսի վճարումները վերաբերում են միայն
Հունիսին: Ապագա ամիսների վճարումները
կփոխանցվեն կամ փոստով կուղարկվեն ամսվա
առաջին օրը կամ դրանից առաջ, ինչպես
նախկինում:

\$2500 Տանտերերի Խթանները Արկա Են:
Վարձակալեք ձեր թափուր բնակարանը
վաուչեր ունեցողներին, ովքեր գտնվում կամ
ապրում են անօթևանության վտանգի տակ, և
դուք կարող եք իրավասու լինել տանտիրոջ
խրախուսական վճարի՝ մինչև \$2500: Շտապ
Բնակարանային Վաուչեր ունեցողներ հիմա
փնտրում են վարձակալության բնակարաններ:
Ամսական վարձավճարի սուբսիդավորման
գումարած, տանտերերը որոնք վարձակալում
են վաուչեր ունեցողներին, կստանան \$2500 մեկ
բնակարանի համար բոնուս և սեքյուրիթի
դեպոզիտի աջակցություն: Ձեր
բնակարանները գրանցելու կամ լրացուցիչ
տեղեկությունների համար խնդրում ենք
կապվել Մարիա Ռոդրիգեսին՝

mrodriguez@cityofpasadena.net կամ (626) 744-7548

Մեծր (Օրենք) Ի Բենթ Քոնթրոլ:
Փասաղենա քաղաքի ընտրողները վերջերս
ընդունեցին «Measure H» վարձավճարների
վերահսկման օրենքը: Ինչպես պահանջվում է
այդ օրենքով, կձևավորվի Վարձակալության



Տների խորհուրդ, և այդ խորհուրդը պատասխանատու կլինի Մեծր H-ի իրականացմանը: Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք այցելել՝

<https://www.cityofpasadena.net/measures-h/>.

Եկամուտների Պաշտպանության Օրենքը ներառում է Մեքքն 8-ի կտրոնները:

Կալիֆորնիայի Արդար Աշխատանքի և Բնակարանի Օրենքը փոփոխվել է 2020-ի Յունվարին՝ ներառելով բնակարանային օժանդակությունը որպես պաշտպանված եկամտի աղբյուր: Սա նշանակում է, որ բնակարան տրամադրողները, օրինակ՝ տանտերերը, չեն կարող հրաժարվել ինչ-որ մեկին վարձակալել կամ այլ կերպ խտրականություն դրսևորել նրանց նկատմամբ, քանի որ նրանք ունեն բնակարանային սուբսիդիա, ինչպիսին է Մեքքն 8-ի Բնակարանային Ընտրության վաուչեր, որն օգնում է նրանց վճարել իրենց վարձը: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք՝

<https://calcivilrights.ca.gov/housing/providerResources/>

Փոփոխություններ կոմունալ ծառայությունների վերաբերյալ: Կալիֆորնիայի օրենքը թույլ է տալիս տանտերերին փոխել ամսական վարձակալության պայմանները պատշաճ ծանուցմամբ: Սա ներառում է կոմունալ ծառայությունների համար պատասխանատվության փոփոխություններ և վարձավճարների բարձրացում: Եթե դուք մտադիր եք փոխել ձեր վարձակալության պայմանները, վստահ եղեք որ վարձակալին պատշաճ ծանուցում եք տվել և այդ ծանուցման պատճենը ներկայացրել եք Բնակարանային Բաժին: Պահանջվող ծանուցման կամ պահանջների վերաբերյալ պարզաբանումների հարցերի համար դիմեք Փասադենայի Քաղաքի ձեր Բնակարանային Օգնականին:

Վարձակալների Լուրեր

Բնակարանային իրավունքների աջակցություն:

Թե տանտերերը և թե վարձակալները իրավունքներ ունեն Կալիֆորնիայի նահանգի օրենսդրության և դաշնային օրենքների համաձայն: Այստեղ՝

Փասադենայում, Բնակարանային Իրավունքների Կենտրոնը կարող է պատասխանել այն հարցերին, որոնք կարող եք ունենալ վարձակալի ձեր իրավունքների վերաբերյալ: Նրանք կարող են օգնել հաշմանդամության, վտարման ծանուցումների, տանտիրոջ/վարձակալի միջնորդության և արդար բնակարանային այլ խնդիրների պատճառով ձեր բնակարանի փոփոխություններին վերաբերող հարցերում: Բնակարանային Իրավունքների Կենտրոնը կարող եք զանգահարել (626)831-9732 հեռախոսահամարով:

Կարևոր Հիշեցում Փոփոխությունները Չեկուցելու Պահանջի Մասին:

Ծրագրի մասնակիցներից պահանջվում է 15 օրվա ընթացքում հաշվետվություն ներկայացնել եկամուտների և տնային տնտեսությունների փոփոխությունների մասին: Փոփոխությունների մասին չտեղեկացնելը կարող է հանգեցնել վարձակալության աջակցության դադարեցմանը:

Եթե ձեր ընտանիքի եկամուտը փոխվել է, թեկուզ փոքր, կամ ձեր ընտանիքի անդամները տեղափոխվել կամ դուրս են եկել, ձեզանից պահանջվում է մեզ գրավոր տեղեկացնել այդ փոփոխության մասին: Եթե դուք չեք կարողացել հայտնել նախորդ փոփոխությունների մասին, կամ ունեք փոփոխություն, որը դուք պետք է զեկուցեք, պետք է դա անեք հիմա, որպեսզի կարողանաք մնաք Մեքքն 8-ում:

Փոփոխության մասին զեկուցելու համար անհրաժեշտ չէ ունենալ պահուստային փաստաթղթեր: Պարզապես պետք է լրացնել ընտանեկան հանգամանքների թարմացման ձևաթուղթը: Դուք կարող եք ներկայացնել պահուստային փաստաթղթերը դա ստանալուց հետո:

Եկամտի կամ ընտանեկան փոփոխությունների մասին կարող եք անձամբ զեկուցել Բնակարանային Վարչությունում, երկուշաբթի-երեքշաբթի 08:00-13:00 և չորեքշաբթի-հինգշաբթի կեսօրից-17:00-ը, կամ փոստով՝ օգտագործելով Ընտանեկան Հանգամանքների Թարմացում ձևը, որը հասանելի է՝

<https://ww5.cityofpasadena.net/housing/section-8/forms-and-handouts/>.

Կարևոր է, որ ճշգրիտ և ամբողջությամբ ներկայացնեք ձեր եկամուտը: Այն պահանջվում է Մեքքն 8-ի կանոններով և թույլ է տալիս մեզ շարունակել վարձակալության

օգնություն տրամադրել ձեր ընտանիքին
և կարիքավոր այլ ընտանիքներին: Մի
վտանգեք ձեր օգնությունը
փոփոխությունների մասին չզեկուցելու
պատճառով:

Խնդրում ենք տրամադրել այս
ժամանակը՝ վերընթերցելու «Ընտանիքի
Պարտավորությունները»՝ համոզվելու
համար, որ դուք տեղյակ եք, թե ինչ
պետք է անեք՝ Սեքշն 8-ի պահանջները
բավարարելու համար:

Դուք կարող եք «Վարձակալության
Աջակցության Ծրագրի Մասնակցի
Ընտանիքի Պարտավորությունները»
ձեռք գտնել Բնակարանային
Վարչության կայքում՝
<https://www.cityofpasadena.net/housing/forms-and-handouts/>